# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

**ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով «ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-22/12» ծածկագրով գնահատող հանձնաժողովի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նիստի**

գ. Ախուրյան — « 12 » « մայիսի » 2022թ.
ժամը 11:00

*Մասնակցում էին*

*Հանձնաժողովի նախագահ*՝ Իկիլիկյան Վարդան Ներսեսի /ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի տեղակալ/

*Անդամներ*՝ Հովիկ Սպիրիդոնի Մելքոնյան /ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակից/
Անահիտ Արամայիսի Յավրումյան /ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/

*Հանձնաժողովի քարտուղար*՝ Ինգա Հովհաննեսի Մարտիրոսյան /ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/

***«ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-22/12» ծածկագրով ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին.***

Գնահատող հանձնաժողովի նիստը կայացել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան բնակավայրի, Գյումրու խճուղի 42 հասցեում:

Գնման առարկա է հանդիսանում՝ **ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ ձեռքբերումը:**

Գնումը կատարվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա.

## 1. Գնանշման հարցման գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին

(Վարդան Իկիլիկյան)

1.1. Բանակցությունների նիստին մասնակցել են «ՄԱԼԿ» ՍՊԸ-ն և «ՄԻԿՊՐՈ» ՍՊԸ-ն.

1.2. Համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի 526 Ն որոշման 40-րդ կետի 5-րդ պարբերության ա ենթակետերի վարվեց միաժամանակյա բանակցություններ:

Բանակցությունների համար մասնակիցներին տրամադրվեց 15 րոպե ժամանակ, երեք քայլ, յուրաքանչյուր քայլը 5 րոպե:

Մասնակիցները մասնակցեցին միայն 2-րդ չափաբաժնի գնի նվազեցմանը, որի արդյունքում ներկայացրեցին հետևյալ գները.

2-րդ չափաբաժին՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Առափի բնակավայրի հին թաղամասի գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում:

1-ին քայլ

| N | Կազմակերպության անվանումը | Ընդհանուր գինը, առանց ԱԱՀ /տառերով և թվերով/ |
|---|---|---|
| 1 | «ՄԱԼԿ» ՍՊԸ | 1 950 000 |
| 2 | «ՄԻԿՊՐՈ» ՍՊԸ | 1 900 000 |

2-րդ քայլ

| N | Կազմակերպության անվանումը | Ընդհանուր գինը, առանց ԱԱՀ /տառերով և թվերով/ |
|---|---|---|
| 1 | «ՄԱԼԿ» ՍՊԸ | 1 890 000 |

3-րդ քայլ
Նոր գնային առաջարկ չներկայացվեց;

## 2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Վարդան Իկիլիկյան)

2.1. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա գնահատող հանձնաժողովը որոշեց յուրաքանչյուր չափաբաժնի համար ընտրված մասնակից ճանաչել

| Չափաբաժնի համարը | Մասնակցի անվանումը | Մասնակցի առաջարկած գին /առանց ԱԱՀ ՀՀ դրամ / |
|---|---|---|
| 1 | «ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | 2 000 000 |
| 2 | «ՄԱԼԿ» ՍՊԸ | 1 890 000 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:**

## 3. ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

3.1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

3.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:

3.3. Անգործության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել կնքված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

*Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.*

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | [signature] | Վարդան Իկիլիկյան |
| *Հանձնաժողովի անդամներ՝* | [signature] | Հովիկ Մելքոնյան |
| | [signature] | Անահիտ Յավրումյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | [signature] | Ինգա Մարտիրոսյան |